Հասցե՝ Արտաշիսյան 46/1, Երևան 0039
հեռ.՝ 010303010
mc@astvatsamayr.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ 1982

"SOURB ASTVATSAMAYR" Medical Centre JSC

№ ՄԱ - 233 06. 05 2024թ.

«ԼԻՆԱՐԵ ՄԵԴ » ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա.ՇԵԳՈՒՆՑԻՆ

Հարգելի՛ պարոն Շեգունց,

«Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Լինարե մեդ» ՍՊԸ-ի միջև 2024թ փետրվարի 02-ին կնքվել է N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/10-10 ծածկագրով բժշկական նշանակության ապրանքների մատակարարման պայմանագիր:

Հիմք ընդունելով ՀՀ պետական վերահսկողական ծառայության 29"04"2024թ N Ե1050-24 գրությունը /կցվում է/, ինչպես նաև առաջնորդվելով կնքված պայմանագրի 8"3 կետով, այն է *"Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:"* «Սուրբ Աստվածամայր

բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն լուծարում է վերոնշյալ պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա" պարբերության " *Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը...*"

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկվում է պայմանագիրը միակողմանի լուծելու հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի 1570053952390100 հաշվեհամարին վճարել որակավորման ապահովման՝ 128250 /մեկ հարյուր քսանութ հազար երկու հարյուր հիսուն/ ՀՀ դրամ և պայմանագրի կատարման ապահովման՝ 85500 /ութսունհինգ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ գումարները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ գրությամբ սահմանված ժամկետում ապահովումները չվճարելու դեպքում Պատվիրատուի կողմից կկայացվի պատճառաբանված որոշում, որը կուղարկվի լիազոր մարմին՝ «Լինարե մեդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը սկսելու նպատակով:

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի տնօրեն՝ Հ. Զոհրաբյան